ՑԱՆԿ

ՀՀ կառավարության կողմից տպագրված խոշորացված Թումանյան համայնքում իրականացվող ծրագրերի

1. Բնակավայրերի ներսի բոլոր ճանապարհների՝ խճա-ավազային պատում (48,3կմ)՝
Համայնքին տրամադրված տեխնիկայի միջոցներով պարբերաբար կատարվում են ներբնակավայրային ճանապարհների մաքրման և բարեկարգման աշխատանքները:

2. Միջբնակավայրային ճանապարհների ՝ Թումանյանից Մարց հատվածի ասֆալտապատում՝
Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չի իրականացվել:

3. Միջբնակավայրային ճանապարհների մնացյալ հատվածի խճապատում՝
Ճանապարհի սպասարկումը կատարվում է Թումանյանի ճանապարհաշինական ընկերության («ՃԱՆՇԻՆ») կողմից:

4.Ճանապարհները սպասարկող տեխնիկայի ձեռքբերում՝
Ամերիկայի ՄԶԳ (USAID) և ՏԶՀ (Տարածքային զարգացման հիմնադրամ) կողմից համայնքին տրամադրվել է 1 Կամազ 65115-026 մակնիշի ինքնաթափ մեքենա, 1 JSB 3CX մակնիշի բազմաֆունկցիոնալ տրակտոր և 1 աղբատար Կամազ 636053 մակնիշի մեքենա:

5.Բոլոր բնակավայրերում մեկական կահավորված ավտոկանգառի կառուցում՝
Ամերիկայի ՄԶԳ (USAID) և ՏԶՀ (Տարածքային զարգացման հիմնադրամ) ֆինանսավորմամբ համայնքի բոլոր բնակավայրերում (Քարինջ,Մարց.Լորուտ,Ահնիձոր,Շամուտ,Աթան) կառուցվել են ավտոկանգառներ,իսկ Թումանյան քաղաքում դեռևսչի կառուցվել կանգառ-շուկան:

6.Փոքր բնակավայրերի համար այլընտրանքային մանկապարտեզային ծառայությունների ստեղծում՝
« UNISEF» մանկական հիմնադրամի, «ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» բարեգործական հիմնադրամի և համայնքի ֆինանսական միջոցներով Մարց,Ահնիձո,Շամուտ և Աթան բնակավայրերում իրականացվել են բնակչությանը այլընտրանքային մանկապարտեզային ծառայությունների մատուցման աշխատանքները,իսկ Ահնիձոր,Շամուտ և Աթան բնակավայրերում կառուցվել են խաղածածկոցներ,որոնց վրա տեղադրվել են 3,5Կվտ անվանական հզորությամբ ֆոտովոլտային կայաններ՝ համալրված 5Կվտ հզորությամբ ցանցային ինվերտորով: Համայնքի ներդրումը կազմել է 2,62մլն.դրամ:

7.Արտադպրոցական կրթություն ստանալու համար երեխաների տեղափոխում համայնքի կենտրոն՝
Ընթացքի մեջ է (Ամերիկայի ՄԶԳ (USAID) և ՏԶՀ (Տարածքային զարգացման հիմնադրամ) կողմից համայնքին փոքր 12 տեղանոց միկրոավտոբուսի տրամադրման գործընթացը:

8.Վարչական շենքերի վերանորոգում և շահագործում որպես մշակույթի տուն՝
Համայնքի ֆինանսական միջոցներով Մարց(2.46մլն.դրամ),Աթան(2,16 մլն.դրամ), Ահնիձոր (1,28մլն.դրամ) և Շամուտ (դպրոցի դահլիճը՝ 2,8մլն.դրամ) բնակավայրերում վերանորոգվել են հանդիսությունների սրահները,որտեղ իրականացվում են տարբեր միջոցառումներ:

9. Առողջապահական հիմնարկների համար դեղորայքի և սարքավորումների ձեռքբերում՝
Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չի իրականացվել:

10.Նոր աղբատար մեքենայի ձեռքբերում և բոլոր բնակավայրերում սահմանված գրաֆիկով աղբահանության կազմակերպում՝
Ամերիկայի ՄԶԳ (USAID) և ՏԶՀ (Տարածքային զարգացման հիմնադրամ) կողմից

համայնքին տրամադրվել է 1 աղբատար Կամազ 636053 մակնիշի մեքենա և 85 հատ աղբարկղ:Աղբարկղները բացի Թումանյանից տեղադրվել են բոլոր բնակավայրերում և սահմանված գրաֆիկով կատարվում են բոլոր բնակավայրերի աղբահանության աշխատանքները:

11.Բոլոր բնակավայրերի կենտրոնական հատվածների և ավտոկանգառների գիշերային լուսավորության ապահովում՝

Համայնքի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացվել է սուբվենցիոն ծրագիր:Ծրագրով նախատեսվում է Շամուտ և Աթան բնակավայրերում կառուցել փողոցային լուսավորության համակարգ,իսկ Թումանյան քաղաքում և Քարինջ,Մարց,Լորուտ և Ահնիձոր բնակավայրերում ընդլայնել գործող համակարգը:Ծրագրի արժեքը կազմում է 15.11մլն.դրամ,որից համայնքի ներդրումը կազմում է 6.04 մլն. դրամ:

12. Գերեզմանատների ցանկապատերի վերանորոգում՝

ՏԱՊ-ում (Տարեկան աշխատանքային պլան) 2019թ. ընդգրկված է Լորուտ բնակավայրի գերեզմանատան ցանկապատի վերանորոգման աշխատանքները: Համայնքի կողմից ներկայացվել է հայտ՝ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրին մասնակցելու համար: Համայնքի ներդրումը կազմում է 250.0հազ.դրամ:

13.Հասարակական տրանսպորտի համապատասխան երթուղիների սահմանում և նոր տրանսպորտային միջոցների ձեռքբերում՝

Ամերիկայի ՄԶԳ (USAID) և ՏԶՀ (Տարածքային զարգացման հիմնադրամ) կողմից համայնքին հասարակական տրանսպորի տրամադրումից հետո կսահմանվեն համապատասխան երթուղիներ՝ բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու համար:

14.Կաթի մթերման կայանի հիմնում՝

«Ամքոր» բարեգործական հիմնադրամի միջոցներով Քարինջ և Մարց բնակավայրերում կառուցվել են կաթի հավաքման կետեր:

15.Գյուղատնտեսական տեխնիկայի պարկի հիմնում՝

Համայնքի զարգացման առաջնահերթությունների ծրագրերի փոփոխման պատճառով գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը հետաձգվել է:

16. Բոլոր բնակավայրերի գրադարանների գրքային ֆոնդերի հանձնում դպրոցներին, բացի Թումանյանից՝

Գրադարանների գրքային ֆոնդերի հանձնումը ընթացքի մեջ է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԶԱՎԱՐՅԱՆ